



ՇԱՀԵԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԵՂԵՑԻԿ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

(88ս է՛լ 283)



Չինջ նուազ նաև ձեռագործ արուեստք ե մեքենական ճարտարութիւնք Գեղեցիկ դպրութեանց կը պարտին. ինչպէս հին անուանի ազգաց՝ այսպէս նաև արդի եւրոպայի քաղաքական յառաջագիմութիւնը ոչ այնքան տարրագիտութեան, բնապատմութեան, աստղաբաշխութեան արդիւնք համարելի է իրաւապէս, որչափ գրականութեան: Այս հաւաստի ստուգութեան վկայք են մեզ գրեթէ ամէն ազգաց պատմութիւնք, ե շատոնց արդէն խոհական հանճար. ներէ ապացուցուած է: Մենք համառօտ յիշատակութեամբ մը միայն շատանանք:

Եւ ահա յոչ կամա իսկ մտաց տեսութիւննիս կը գրաւէ Աթէնքի հասարակապետութեան այն հռչակապանծ դարն, յորում 'ի վայրկեան ժամանակի՝ կարծես թէ ամէն գեղարուեստից ելլէր ծաղկիւն ե կատարեալագործուիլը մէկ եղած կը նկատեմք. յորում 'ի վայրկեան ժամանակի՝ կարգ, վայելչութիւն, շնորհք ե շքեղութիւն քաղքին ամէն նիւթեղինաց վրայ կը փայլին, ուր վերջապէս ճարտասանական պերճախօսութիւն, ազնուութիւն, քաղցրութիւն, ե ատտիկէականութիւն կը բուրբն ամէն տանց մէջ, ե բոլոր քաղաքացւոց բարբը կը կազմեն: Սակայն աններելի է ըստ մեզ առանց յանդուգն համարձակութեան այն անմահական դարուն վրայ խօսք ընել, մինչդեռ մեր աչաց առջև կեցած կը համարիմք զճոռումաբանն Պերիկլէս որ ձայնը բարձրացուցած կը գոչէ առ Ժողովուրդն Աթենացւոց:

« Ուստի այդ յուզումն բարեպատեհ՝ յանկարծ 'ի միջի ձերում յարուցեալ, ո՞րք Սթենտիք. ուստի 'ի ձեզ դահլիճքդ այդ իցեն մեծամեծք՝ կարգօր և տեսակօր զանազանեալք, որ հովանի ունին անդաստակացդ, և յայթիւս և 'ի զարմանս կրթեալ միանգամայն ապշեցուցանեն զձեզ... Ուստի և անյորիք իցեն այդոքիկ, յորս համեմատութիւն, զաշնաւորութիւն ճշգրտութիւն, փափկութիւն և շնորհ միանգամայն փայլեն ակներև, Ուստ ուստեք դա մայր ձեր Սթենտիս, որ 'ի շքեղազարդ բարձունսդ վերաբազմեալ շնչէ զմեծութիւն, և Ուրամազդ Ոլիմփիական՝ հաւաստարակից աստուածականին վեհապետութեան, որ բարգաւաճէ զկրօնս ազգաց և ժողովրդոց... Հարցէք, ո՞րք Սթենտիք, հարցէք ցհարս ձեր չև ևս զառամաւալ՝ որ պիտի ինչ էր Սթենտիք յաւուրս մանկութեան կենաց իւրեանց, Շէնք բարձրակառոյցք՝ 'ի ճակատն բերէին զդրոշմն անողորմիկ հարկին որով կառուցան. տաճարք նորա շքեղք և մեծարոյք՝ էին խրճիթք զարնիպսակք, Տեսէք զՍթենտիք, ուր ապաստանէին երբեմն արքն այնորիկ, զորս դեռևս 'ի պատուի ունիք դուք՝ և անխոր ընծայէք մեծարանս՝ որպէս միակ հոգաբարձուաց քաղաքիս. հայեցաբոլք ասեմ՝ անդանօր, յաւերակս անդ կաւեղէն և անկերպարան գերանացդ, մերկացէք զնա 'ի մեծվայելչութեանց իւրոց՝ որ պայծառագոյն ևս 'ի դիրս աւերակացդ փայլեն... »

Ձինչ այն իցէ, Սթենտիք, յորմէ պատճառս էառ այսպիսի կանխաժաման, մեծ և բարեպատեհ փոփոխութիւն 'ի քաղաքիս. Ուրդեօք ճարտարութիւն, ուսումն և փոյթ Հելլենացուց, եւ սակայն սուր թաղեալ կային և 'ի մոռացոնս անկեալ՝ այդ ճարտարութիւն, այդ ուսումն և խնամ՝ ընդ այնքան դարս որ յառաջ քան զլիողոն, թիրևս օրինակն ազգաց որ շուրջ զձեզ իցեն. եւ զիւրդ մարթ էր Հելլենացուց յանհեղեղ և 'ի մեծամարմին զանգուածս Սփրոյ և Եգիպտոսի, ուր ոչ ինչ այնպէս յապշութիւն և 'ի զարմանս կրթէր զազգս և զժողովրդոցս, որպէս ահեղ և անլոյծ յամառութիւն անհուն խօլացն և սկայազանց, զիւրդ մարթ էր նոցա յազգացն այնպիսեաց առնուլ դաս, և ոչ զուսեալն ևեթ աւանդել 'ի գիր, այլ և 'ի ծագ կատարելութեան հասուցանել զվայելուչն և զփափուկն 'ի կարծրութիւն. Աղէ որպիսի ինչ հաղորդութիւն կայցէ 'ի միջի ընդ զօրութեան ըսկայիցն այնորիկ խօշականաց՝ և կարգացս այսոցիկ և օրինաց, այսմ բարձրութեան և շքեղ զաշնաւորութեան, ընդ որս և արդ իսկ 'ի խօսել իմում առ ձեզ՝ ոչ յետս կայք 'ի սքանչանալոյ. Ուրեմն յանկարծածին և աստուածեղէն իմն զօրութիւն վառեալ բորբոքեցաւ 'ի Յոյնս, և անտի՝ որպէս 'ի լեռնէ իմեմնէ՝ սանդարամետային հրով ծանրաբեռնելոյ՝ ճայթեալ փայլատակունս հատին յանկարծ եռանդըն հանճարոյ և ընտիր ճաշակաց, կիզելով զազգն ողլոյն. Եղէք, Սթենտիք, զայրն մեծանուն զՊիսիստրատ, յորում արտաքոյ քան

զանուան բռնաւորի, ամենայն ինչ հաճոյ է յաչա ձեր: Յիշեցէք և
գորդի նորա զՀիպպարքոս: Կարծիցեմ ես անկեալ 'ի մտաց ձերոց,
եթէ քանի խնամով՝ հօրն հուսարեալ էր նիւթս ինչ բանաստեղծա-
կան, որ յառաջ ժամանակաւ՝ հատուկտիր և ընդ աղօտ միայն նըշ-
մարէին 'ի Հելլենացւոց աշխարհիս, և ապա հրամանաւ որդւոյն՝ ող-
ջոյն աշխարհս 'ի խաղս և 'ի սպարս զայնս երգել սկսաւ 'ի բերան,
իմանայք զոր տեսնս, և Ոլթենացիք: Հոմերոս, Հոմերոս եղև այն
այն մեծ՝ որ լուսաւորեալ պայծառացոյց զՈլթէնս, և բազում և
գծուարագիւտ գանձուք ագնուացուցեալ զհայրենիս ձեր՝ 'ի ճաշակս
գեղեցկին ընտելացոյց զձեզ: Ձինչ էին արդեօք գործք նկարչոց մե-
րոց և գրոյցաց յառաջ ժամանակաւ քան զժաւալուձի երկոց նո-
րին, զինչ արդեօք՝ եթէ ոչ միտաւին ինչ բնական յամբ և անզօր՝
գոր ունի մարդ 'ի նմանակցութեան ընկերին: Իմանայաք յայնժամ,
այո՛ր, եթէ պակասեն ինչ ինչ 'ի հոգւոց մերոց, թափուր 'ի մեծամե-
ծաց գտանիմք: Իմանայաք եթէ այլում իմիք անգորրաւէտ սիրոյ և
ցանկութեան պէտք էին մեզ՝ որով մարթ իցէ դարմանել զսաղո-
կութիւն: Թէ իցէ գեղեցկութիւն՝ ստեղծանելի առ 'ի մէնջ, եթէ 'ի
ձեռակերտս մեր և 'ի շէնս բարձրակառոյցս՝ էր գտանել և մօտն ինչ
հաճելի աշայ մերոց, այլ զգիարդն գիտել տնմարթ իցէ մեզ: Իսա-
նայք վերստին գործին մեր քանդակիչ՝ կրթիլ 'ի նմանակցութիւն,
բայց և այնքակի նմանակցութիւնք՝ անմասն էին և 'ի շարժմանէ և 'ի
կենաց: Ոպա անդէն նորանոր պատճառանաց կրթէաք զհետ, այլ և
այն պատճառնք՝ կամ յօժարութիւն իմե էին բոս քմաց՝ անհաճոյք
մեզ, կամ նմանութիւն առաջնոցն՝ որ խորշիւքն էին մեզ և ծանրա-
տաղտուկ: Բայց իբրև 'ի ձեռն Պիսիստրատայ և որդւոյն կոյրն՝ այն-
քայածանօթ ձեզ եղև, և Ոլթենացիք, երարձ զսաղաքատն որ կայր
'ի վերայ աչաց ձերոց, և պատառեաց և անհետ արար յերեսաց եր-
կրէ, և ասէ ցձեզ: Հայեցարուք, ընտրեցէք, նմանեցէք: աստ է գե-
ղեցիկն: Այլ զի կարի անսահմանաւոր է այս մարմին, և դուք առ երի
կայք նմին նկատող լինել բովանդակ գեղեցկութեանն, զընտիր ըն-
տիր մասունս նորին զցրուեալս կցեցէք յիրարաւ, կերտեցէք զնմա-
նինն, և ահա ձեռամբ ձերով ստեղծանիցէք գեղեցկութիւն նոր և:

Սոյնօրինակ կը համարիմք անշուշտ որ խօսած ըլլայ Պելիկէս, զի
այս եղաւ իրաւցընէ Յունաց ընդհանուր կարծիքը, որը ոչ միայն ըն-
տիր ճաշակի ծագումն գեղարուեստից մէջ՝ Հոմերոսէն յառաջ եկած
կը համարէին՝ այն իրենց անուանի հասարակապետութեանց ատեն,
այլ և ամէն գիտութեանց գերազանց սկզբունք, որ 'ի հմտութիւն
խաղաղութեան և պատերազմական գործոց հարկաւորք են: Բայց
թէպէտ անհաւատալի թուի ալ այս բանս, մեզի համար բաւա-
կան է հաստատելն՝ որ Պիսիստրատայ Հոմերի գործերն հռչակելէն
առաջ՝ ճարտարապետութիւն, քանդակագործութիւն, և մանաւանդ

նկարչութիւն, գեղարուեստ ըսուելու յարգը չունէին Յունաց մէջ. և անկէ քիչ վերջ՝ արուեստաւորք բոլորովին Հոմերի գործոց հետեցան և կարծես թէ կը մրցէին իրարու հետ. որով անմիջապէս Պիսիստրատէն վերջ մէկ գարու մէջ այն կատարելութեան աստիճանին ծայրը հասան արուեստք, որուն վրայ նաև այս լուսաւորեալ դարու մէջ չենք կրնար չհրաշանալ և զարմանքնիս բռնել: Ուրեմն ամէն պատճառներէ առաջ, եթէ ըլլայ քաղաքական, եթէ ըլլայ բնական, ամենազօրաւոր եղաւ Հոմերի բանաստեղծութեան ընդարձակ օրինակաց ներկայութիւնն՝ ի Յոյնս, որ ամենամեծ և անակնկալ վերանորոգութիւն մ'ըրաւ բոլոր աշխարհին: Տղաք, ինչպէս կը վկայէ Քսենոփոն, ի բերան կը սորվէին հոմերական տողերը. պատանին՝ խորունկ բանաստեղծի պէս կը մտածէր, կը բարձրանար մտքով, և այս բարձրութեան գործադիր ըլլալով՝ մեծամեծ գործերու ձեռք զարկաւ և յաջողեցաւ, և ամենասուղ ժամանակի մէջ իր ազգին ամենէն երևելի անձանց կարգն անցաւ: Այսպէս Ողբերգութիւնն, որ հազիւ թէ նախնական ձև մը ստացած էր Եսքիլէսի ձեռքով, մէկէն ի մէկ Սոփոկլէս կատարելութեան ծայրն հասուց: Նմանապէս ուրիշ արհեստներ. փիլիսոփայ, Պլատոն և Ալեքսանդրէս՝ գիտցան զարմանալի գեղեցկութեամբ բացատրել բնութեան ներդաշնակութիւնները, մարդկանց բարքը և կրքերը...

Բայց ինչ հարկ կայ տեսութիւննիս միայն Յունաց վրայ ընելու, մինչդեռ ամէն գարու մէջ և ամէն ազգի մէջ՝ որք գեղարուեստից հանճարոյն հիւրընկալութեան փառքն ունեցան, գրականութեան և ընտիր ախորժակաց ուսումն՝ և մոսնաւորապէս Պերճախօսութիւնն՝ որ և իցէ յառաջագիմութեանց կարապետ եղան. և սւր որ ընդ հակառակն պակսեցաւ այս լոյսն՝ անմիջապէս ինկաւ կործանեցաւ ուրիշ արհեստից մեծութիւնն ու փառքը:

Շարունակելի

Հ. Թ. Թ.